IV

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՋԱՆԱՋԱՆ ՕՊՈՋԻՑԻՈՆ ՊԱՐՏԻԱՆԵՐԸ

Այն բանից հետո, ինչ ասված է երկրորդ հատվածում, հասկանալի է կոմունիստների վերաբերմունքը դեպի արդեն ձևավորված բանվորական պարտիաները, այսինքն՝ նրանց վերաբեր-

---

1 *Ֆալանստերներ կոչվում էին Ֆուրյեի ծրագրած սոցիալիստական գաղութները։ Իկարիա էր կոչում Կաբեն իր ուտոպիական երկիրը, իսկ հետագայում՝ իր կոմունիստական գաղութն Ամերիկայում։* (1888 թ. անգլերեն հրատարակության էնգելսի ծանոթագրությունը։)

Home-colonies *(գաղութներ երկրի ներսում) էր անվանում Օուենը իր օրինակելի կոմունիստական համայնքները։ Ֆալանստերներ էին կոչվում Ֆուրյեի ծրագրած հասարակական պալատները։ Իկարիա էր կոչվում այն ուտոպիական-ֆանտաստիկ երկիրը, որի կոմունիստական հիմնարկությունները նկարագրել է Կաբեն։* (1890 թվականի գերմաներեն հրատարակության էնգելսի ծանոթագրությունը։)

* *Խոսքը վերաբերում է «սոցիալիստական-դեմոկրատական» պարտիայի օրգան* «La Réforme» *(«Ռեֆորմ») թերթի կողմնակիցներին։* Խմբ.

մունքը դեպի չարտիստներն Անգլիայում և ագրարային ռեֆորմի կողմնակիցները Հյուսիսային Ամերիկայում։

Կոմունիստները պայքարում են հանուն բանվոր դասակարգի մերձավորագույն նպատակների և շահերի, բայց այսօրվա շարժման մեջ նրանք միաժամանակ պաշտպանում են նաև շարժման ապագան։ Ֆրանսիայում, պահպանողական և ռադիկալ բուրժուազիայի դեմ մղվող պայքարում, կոմունիստները հարում են սոցիալիստական-դեմոկրատական պարտիային[1], առանց, սակայն, հրաժարվելու ռևոլուցիոն տրադիցիայից բխող ֆրազներին ու պատրանքներին քննադատական վերաբերմունք ցույց տալու իրավունքից։

Շվեյցարիայում նրանք օժանդակում են ռադիկալներին, առանց, սակայն, աչքաթող անելու, որ այդ պարտիան բաղկացած է հակասական տարրերից, մասամբ ֆրանսիական ոճի դեմոկրատական սոցիալիստներից, մասամբ ռադիկալ բուրժուաներից։

Լեհերի մեջ կոմունիստներն օժանդակում են այն պարտիային, որն ագրարային ռևոլուցիան համարում է ազգային ազատագրման պայման, հենց այն պարտիային, որը առաջացրեց 1846 թ. Կրակովի ապստամբությունը։

Գերմանիայում կոմունիստական պարտիան պայքարում է բուրժուազիայի հետ միասին, որքանով որ բուրժուազիան հանդես է գալիս ռևոլուցիոն կերպով բացարձակ միապետության, ֆեոդալական հողային սեփականության և ռեակցիոն քաղքենիության դեմ։

Բայց մի րոպե անգամ նա չի դադարում բանվորների մեջ բուրժուազիայի և պրոլետարիատի թշնամական հակադրության ըստ հնարավորին ավելի պարզ գիտակցություն մշակելուց, որպեսզի գերմանական բանվորները կարողանան իսկույն ևեթ օգտագործել հասարակական և քաղաքական այն պայմանները, որոնք իրենց հետ պետք է բերեն բուրժուազիայի տիրապետությունը որպես զենք հենց նրա դեմ, որպեսզի Գերմանիայում ռեակցիոն դասակարգերի տապալումից անմիջապես հետո պայքար սկսվի հենց բուրժուազիայի դեմ։

Կոմունիստներն իրենց գլխավոր ուշադրությունը Գերմանիայի վրա են դարձնում այն պատճառով, որ նա բուրժուական ռևոլուցիայի նախօրյակին է գտնվում, որովհետև նա այդ հեղաշրջումը կատարելու է ընդհանրապես եվրոպական քաղաքակրթության ավելի առաջադիմական պայմաններում, շատ ավելի զարգացած պրոլետարիատով, քան XVII դարի Անգլիայում և XVIII դարի Ֆրանսիայում։ Գերմանական բուրժուական ռևոլուցիան կարող է, հետևաբար, պրոլետարական ռևոլուցիայի միայն անմիջական նախերգանք լինել։

Մի խոսքով՝ կոմունիստներն ամենուրեք պաշտպանում են ամեն մի ռևոլուցիոն շարժում, որն ուղղված է գոյություն ունեցող հասարակական ու քաղաքական կարգերի դեմ։

Այս բոլոր շարժումների մեջ նրանք առաջին տեղն են մղում սեփականության հարցը որպես շարժման հիմնական հարց, անկախ այն բանից, թե ընդունե՞լ է նա քիչ թե շատ զարգացած ձև։

Վերջապես, կոմունիստներն ամենուրեք միավորման և համաձայնության են ձգտում բոլոր երկրների դեմոկրատական պարտիաների միջև։

Կոմունիստներն անարգ բան են համարում թաքցնել իրենց հայացքներն ու մտադրությունները։ Նրանք բացեիբաց հայտարարում են, որ իրենց նպատակները կարող են իրագործվել մինչև այժմ գոյություն ունեցող ամբողջ հասարակարգի բռնի տապալման միջոցով միայն։ Թո՛ղ սարսռեն տիրող դասակարգերը Կոմունիստական Ռևոլուցիայի առաջ։ Պրոլետարները ոչինչ չունեն կորցնելու այդ ռևոլուցիայի մեջ՝ բացի իրենց շղթաներից։ Իսկ ձեռք կբերեն ամբողջ աշխարհը։

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

---

[1] Այն ժամանակ այս պարտիայի ներկայացուցիչը պառլամենտում Լեդրյու-Ռոլլենն էր, գրականության մեջ՝ Լուի Բլանը, ամենօրյա մամուլի մեջ՝ «La Réforme» օրաթերթը։ Սոցիալիստական-դեմոկրատական անունը նշանակում էր, որ դեմոկրատական կամ ռեսպուբլիկական պարտիայի այս մասը, ինչպես և այսանվան հեղինակները քիչ թե շատ ներկված էին սոցիալիստական գույնով։ (1888 թվականի անգլերեն հրատարակության էնգելսի ծանոթագրությունը։)

Իրեն սոցիալիստական-դեմոկրատական անվանող պարտիայի ներկայացուցիչը Ֆրանսիայում՝ քաղաքական կյանքում Լեդրյու-Ռոլլենն էր, գրականության մեջ՝ Լուի Բլանը. այսպիսով, նա, ինչպես երկինքը երկրից, տարբերվում էր ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայից։ (1890 թվականի գերմաներեն հրատարակության էնգելսի ծանոթագրությունը։)